

Արցախի ինքնորոշման իրավունքը և «remedial-secession»-ը

Բովանդակության ցանկ

I.	Արցախի ինքնորոշման իրավունքը՝ «remedial-secession»-ի ուժով.....	1
1.	Արցախը ինքնորոշման իրավունքի սուբյեկտ է	1
2.	Remedial-secession-ի հիմքերն ու բովանդակությունը.....	3
3.	Remedial-secession-ի համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքները.....	4
II.	Արցախի Հանրապետությունը որպես de-facto պետություն	6
ա)	Լեռնային Ղարաբաղի արդյունավետ պետականությունը	7
բ)	Լեռնային Ղարաբաղի ներգրավվածությունը միջազգային հարաբերություններում	8
III.	1994-1995 թթ. Չինադադարի համաձայնագրերը.....	9

I.Արցախի ինքնորոշման իրավունքը՝ «remedial-secession»-ի¹ ուժով

1. Արցախը ինքնորոշման իրավունքի սուբյեկտ է

Արցախն իրավունք ուներ անջատվել Ադրբեյջանից ոչ միայն խորհրդային օրենսդրության ուժով, այլ նաև՝ միջազգային իրավունքի մեջ ամրագրված ինքնորոշման իրավունքի ուժով, քանի որ առկա են անջատման իրավունքի (secession) բոլոր նախադրյալները:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի սկզբունք է: Որպես սկզբունք, այն հստակորեն ճանաչվում է որպես Միավորված ազգերի կազմակերպության նպատակներից մեկը (ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ պարբերություն, 55-րդ հոդված): Սկզբունքի իրավական բովանդակությունը սահմանված է ՄԱԿ-ի 1966 թ. դեկտեմբերի 19-ի երկու միջազգային դաշնագրերի՝

¹ Lee C. Buchheit: Secession. The Legitimacy of Self-Determination, New Haven / London 1978, էջ 222:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրեր, նույնակաբովանդակ 1-ին հոդվածի 1-ին մասով: Դաշնագրերը ուժի մեջ են մտել 1976 թ. : Համաձայն նշված դրույթի. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի բերումով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»:

Ինքնորոշման իրավունքը վաղուց դուրս է եկել միջազգային պայմանագրային իրավունքի սահմաններից և դարձել է միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմ: Այն, որպես այդպիսին, ունի իմպերատիվ (անհերքելի) իրավունքի (*ius cogens*) բնույթ, այսինքն՝ միջազգային իրավունքի նորմերի հիերարխիայում ունի բարձրագույն աստիճան և գործում է որպես օբյեկտիվ սկզբունք ոչ միայն կողմերի համար՝ նրանց միջև պայմանագրերի հիման վրա (*inter partes*), այլ՝ միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտների նկատմամբ (*erga omnes*): Սա, ի թիվս այլնի, նշանակում է, որ երկկողմ կամ բազմակողմ միջազգային իրավական պայմանագրերը կամ պայմանագրի դրույթները, որոնք հակասում են ինքնորոշման իրավունքին, անվավեր են²:

«Քաղաքական կարգավիճակի» մասին ազատորեն որոշումներ կայացնելու իրավասությունը ՄԱԿ-ը կոնկրետացրել է 1970 թ.-ին ընդունված «*Friendly Relations Declaration*»-ի³ հինգերորդ հիմնական սկզբունքով (Principle of equal rights and self-determination of peoples)՝ ճանաչելով ինքնորոշման իրավունքի իրացման հետևյալ այլընտրանքային «ձևերը» (մաս 4). «Ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետությանը ազատորեն միավորումը կամ դրա հետ ինտեգրումը կամ ժողովրդի կողմից ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի ազատորեն հաստատումը հանդիսանում են ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման ուղիներ»:

Արցախի հայերը ընտրեցին առաջին այլընտրանքը: Նրանք համապատասխանում են ժողովուրդ լինելու համար ներկայացվող օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներին. ընդհանուր լեզու, մշակույթ, կրոն, մտածելակերպ, որոշակի տարածքի վրա համատեղ կյանքի տևողություն, պատմական համատեքստում ընդհանուր ճակատագիր (օբյեկտիվ չափանիշ), մեկ ժողովրդի պատկանելու անհատական գիտակցում, դրա հետ կապված սեփական ինքնություն և այդ ինքնությունը պահպանելու կամք (սուբյեկտիվ չափանիշ):

² Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա, հոդված 53, մաս 1, կետ 1:

³ *Principle of equal rights and self-determination of peoples*, Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations“), Резолюция Генеральной Ассамблеи ООН No. 2625 , 24.10.1970.

2. Remedial-secession-ի հիմքերն ու բովանդակությունը

Միջազգային իրավունքի տեսանկյունից որևէ պետությունում աօրոդ ժողովրդի անջատումը մայր պետությունից (parent state) ինքնին չի նշանակում, որ խախտվում է տարածքային ամբողջականության սկզբունքը:

ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետը պարզորոշ վկայում է այն մասին, որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է միայն ճանաչված պետությունների միջև հարաբերությունների կարգավորմանը⁴:

Անդրադառնալով ազգերի ինքնորոշման սկզբունքի և տարածքային ամբողջականության սկզբունքների հարաբերակցությանը՝ «Friendly Relations Declaration»-ի 5-րդ սկզբունքի 7-րդ մասը նախատեսում է, որ «Վերոնշյալ պարբերություններում ոչ մի բան չպետք է մեկնաբանվի որպես լիազորող կամ խրախուսող որևէ գործողություն, որը կարող է հանգեցնել ինքնիշխան և անկախ պետությունների մասնատման կամ տարածքային ամբողջականության կամ քաղաքական միասնության մասնակի կամ ամբողջական խախտման, **որոնք գործում են ժողովուրդների հավասարության և ինքնորոշման սկզբունքի պահպանմամբ, և արդյունքում ունեն կառավարություններ, որոնք ներկայացնում են տվյալ տարածքին պատկանող ամբողջ ժողովրդին՝ առանց ռասայի, դավանանքի կամ գույնի տարբերակման**»:

Այլ կերպ ասած, շեղատառով նշված արտահայտությունից բխում է, որ այն պետությունը, որն իրականացնում է կոպիտ խտրականության քաղաքականություն, ճնշում կամ նույնիսկ հետապնդում է ազգային փոքրամասնություններին կամ մարդկանց խմբերին, չի կարող նրանից պահանջել քաղաքացիական հավատարմություն իր հանդեպ, քանի որ իր պետական մարմինները այլևս «չեն ներկայացնում» բնակչության այդ մասին: Առնվազն այդ փոքրամասնության նկատմամբ այդպիսի պետությունը չունի իշխանության իրականացման լեգիտիմություն:

Սա հատկապես արդիական է այն դեպքերում, երբ տվյալ ժողովուրդը մարդկության դեմ լուրջ հանցագործությունների գոհ է դարձել՝ միջազգային քրեական իրավունքի, այդ թվում՝ ցեղասպանության իմաստով: Նման տուժած մարդկանց չի կարելի ստիպել շարունակել ապրել այդպիսի պետության կազմում: Բացի այդ,

⁴ Այս մոտեցումը իր արտահայտությունն է գտել Kosovo Advisory Opinion-ի 80 և 84-րդ կետերում. «Ընդհանուր միջազգային իրավունքը չի արգելում անկախության միակողմանի հռչակումները» (կետ 84): Տարածքային ամբողջականությունը գործում է միայն Պետությունների (ՄԱԿ անդամ) միջև հարաբերությունների համար:

remedial secession-ի վերապահումը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ բոլոր էական պարամետրերով էթնիկ մեծամասնությունն ու փոքրամասնությունը չունեն անհրաժեշտ նախադրյալներ մեկ պետությունում խաղաղ գոյակցության համար:

Մեկ պետության մեջ միասին ապրելու անհնարինությունը անջատման իրավունքի հիմնական, վճռական չափանիշն է: Պետական ինքնիշխանության սկզբունքի սահմանափակումը ՄԱԿ-ի «*Friendly Relations Declaration*»-ից բխող remedial secession-ի դրույթով համընկնում է իրավական այն հայեցակարգի հետ, ըստ որի յուրաքանչյուր պետություն պարտավոր է պաշտպանել իր քաղաքացիներին, և ինքնիշխանությունը նրան չի տալիս անվերապահ լիազորություններ վարվել քաղաքացիների և ազգային փոքրամասնությունների հետ, ինչպես ցանկանում է:

Այսպիսով, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքը առավելություն ունի պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքի նկատմամբ⁵, այսինքն՝ ինքնորոշման իրավունքը, որոշակի պայմաններում, որպես վերջին միջոց *ultima ratio* ներառում է ժողովրդի անջատման իրավունքը („*remedial secession*“)⁶:

„Remedial secession”-ի դրույթը ամբողջությամբ կիրառելի է Արցախի ժողովրդի նկատմամբ, որի կողմից ձեռնարկված ինքնորոշման քայլերը ճնշվել են Խորհրդային Ադրբեջանի կողմից:

3. Remedial-secession-ի համար հիմք հանդիսացող փաստական հանգամանքները

- Ադրբեջանի Հանրապետությունը ոչ միայն քաղաքական միջոցներով հակադրվեց Արցախի ժողովրդի օրինական պահանջներին, այլև՝ պետական մակարդակով բռնություն գործադրեց հայերի ինքնորոշման ցանկության դեմ: Սումգայիթում, Գյանջայում, Բաքվում և այլուր տեղի ունեցած 1998-1990 թթ.

⁵ Основательно: Peters, Anne: Humanity as the A and Ω of Sovereignty, в: European Journal of International Law (EJIL) Vol. 20 (2009), с. 513-544; 569-573; о „responsibility to protect“ подробно Luchterhandt, Otto: Völkerrecht versus Völkermord: bedeutende Fortschritte – ungelöste Probleme [Международное право против геноцида: значительные достижения – нерешенные проблемы], в: Zeitschrift für Genozidforschung 9. Jahrgang (2008), Heft 2, с. 10-67 (42-61)

⁶ Tomuschat, Secession (сноска 148), էջ. 35 (հղում 52); Oeter, Stefan: Selbstbestimmungsrecht im Wandel. Überlegungen zur Debatte um Selbstbestimmung, Sezessionsrecht und ‘vorzeitige’ Anerkennung, в: Zeitschrift für ausländisches öffentliches Recht und Völkerrecht (ZaöRV), հատոր 52 (1992), էջ 741 – 775 (756 և հետագա էջերը); Thürer, Daniel: Das Selbstbestimmungsrecht der Völker, в: Archiv des Völkerrechts (AVR) հատոր 22 (1984), էջ 113 – 137 (127 և հետագա էջերը).

հայերի նկատմամբ իրականացվեցին ջարդեր, իսկ 1991 թ. խորհրդային գորքերի աջակցությամբ տեղահանվեց Շահումյանի շրջանի բնակչությունը:

- Ադրբեջանի կառավարությունը խորհրդային տարիներին երբևէ բարյացկամ վերաբերմունք չի ունեցել Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակի նկատմամբ: Ընդհակառակը, 1991 թ. նոյեմբերի 26-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը չեղյալ համարեց 1923 թ. տրված ինքնավար շրջանի կարգավիճակը: Օրենքը պաշտոնապես հիմնավորվեց նրանով, որ այն հակասում է «ադրբեջանական ժողովրդի ազգային շահերին» և մի այնպիսի գործոն է, որը նպաստում է «ադրբեջանական և հայ ժողովուրդների միջև էթնիկական վեճերի խորացմանը՝ ուղղված Ադրբեջանի ամենամեծ բնական և տնտեսական տարածաշրջանը հանդիսացող Ղարաբաղի ենթակառուցվածքների և տնտեսական կապերի ոչնչացմանը, և օգտագործվում է հայ ազգայնականների կողմից այս տարածքում բռնի կերպով արմատախիլ անելու բոլոր էթնիկական, քաղաքական, պատմական, տնտեսական և հոգևոր նշանները, որոնք անվերապահորեն վկայում են, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի բաղկացուցիչ մասն է»⁷: Այդ օրենքը մինչ այժմ ուժի մեջ է, իսկ 1995 թ. նոյեմբերի 12-ի Ադրբեջանի գործող Սահմանադրությունը որևէ բառով չի հիշատակում Լեռնային Ղարաբաղը: Այս ֆոնին դատարկ արտահայտություն է ԵԱՀԿ-ում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ բանավեճերի ընթացքում Ադրբեջանի կրկնվող հայտարարություններն այն մասին, որ պատրաստ է Լեռնային Ղարաբաղին տրամադրել ամենաբարձր ինքնավարության կարգավիճակ:
- Ադրբեջանի կողմից Արցախին խոստացվող «բարձր մակարդակի ինքնավարության» խոստումները բացարձակապես անհավատարժան են՝ հաշնի առնելով մի շարք էթնիկական խմբերի (հատկապես՝ լեզգիների և թալիշների) վատ վիճակը Ադրբեջանում: Ադրբեջանը մինչ այժմ չի իրագործել ազգային փոքրամասնությունների պաշտպանությանն ուղղված Եվրոպայի խորհրդի Ռեզիոնալ լեզուների և լեզվական փոքրամասնությունների 1992 թ. Եվրոպական Խարտիայի և Ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ 1994 թ. շրջանակային կոնվենցիայի պահանջները:

⁷ Текст: Статус Нагорного Карабаха (сн. 111), с. 79.

- Արցախը երբևէ չի կարող գտնվել Ադրբեջանի կազմում նաև այն պատճառով, որ Ադրբեջանում գործնականում երաշխավորված չեն մարդու հիմնական իրավունքները, հաստատված է բռնապետական ռեժիմ, 2009 թ. մարտի 18-ի սահմանադրական փոփոխություններով Ալիևին երաշխավորված է պաշտոնավարման անսահմանափակ ժամկետ և նախագահական գերիշահություններ: Ի տարբերություն Ադրբեջանի, Արցախը 2006 և 2016 թթ. ընդունել է ժողովրդավարական Մահմանադրություններ և պարբերաբար տեղի ունեցող նախագահական ընտրություններով ընտրվել է արդեն 4 Նախագահ:
- 2016 թ. և 2020 թ. պատերազմները և դրանց ընթացքում տեղի ունեցած միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումները վկայում են, որ Արցախի ժողովրդի ֆիզիկական գոյությունը Ադրբեջանական Հանրապետության կազմում վտանգված է և անհնար:

II. Արցախի Հանրապետությունը որպես *de-facto* պետություն

Լեոնային Ղարաբաղի հայերի կողմից սեփական պետության հիմնադրման տեսքով ինքնորոշման իրավունքի իրականացումը հարց է առաջացնում, թե արդյո՞ք «Արցախի Հանրապետությունը» համապատասխանում է պետականության միջազգայնորեն ճանաչված չափանիշներին և *de facto* (փաստացի) պետություն է⁸:

De facto պետության սկզբունքը, որը միջազգային իրավունքի դոկտրինայում համընդհանուր ճանաչում ունի, ըստ գերակշռող կարծիքի ներառում է երկու հատկանիշ: Յոխեն Աբրահամ Ֆրովայնը, ով հիմնել է «կայունացած *de facto* ռեժիմների» (*de facto* պետության) տեսությունը, նման պետությունների համար որոշիչ է համարում երկու չափանիշ. *անաջին*, ռեժիմի ինքնիշխանության արդյունավետությունը և, *երկրորդ*, դրա առնվազն սահմանափակ ներգրավումը միջազգային հարաբերություններում⁹:

⁸ По Джеймсу Кроуфорду, существование государства с точки зрения международного права определяется следующими четырьмя критериями: 1. определенная территория (defined territory), 2. постоянное население (permanent population), 3. правительство (government) и 4. независимость (independence). Crawford, James: The Creation of States in International Law, 2-nd edition, Oxford 2007, с. 37 ff.; см. также: Scott Pegg: Principles of Public International Law, 6-th edition, Oxford 2003, с. 76.

⁹ Jochen A. Frowein: Das de facto-Régime im Völkerrecht, Köln/Berlin 1968; S.35ff.; 68ff.; derselbe: Stichwort „De Facto-Régime“, in: Enciklopaedia of Public International Law (EPIL), Tom I, North-Holland etc. 1992, S.966–968.

ա) Լեռնային Ղարաբաղի արդյունավետ պետականությունը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ունի ամբողջովին ձևավորված գործունակ պետական իշխանություն, այդ թվում՝ մարտունակ բանակ: Նրա պետական մարմինները գործում են Սահմանադրության հիման վրա, որի մշակումը, ընդունումը և բովանդակությունը համապատասխանում են ժողովրդավարական ու իրավական պետությունը բնորոշող չափորոշիչներին: 2006 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված առաջին Սահմանադրությունը⁹⁴ նախատեսում էր կիսանախագահական կառավարման համակարգ՝ երկաստիճան գործադիր իշխանությամբ: Հանրապետության Նախագահն ընտրվում էր ժողովրդի կողմից 5 տարով՝ իրար հետևից անընդմեջ երկու անգամ պաշտոնավարելու հնարավորությամբ: Օրենսդիր իշխանությունը վերապահված էր խորհրդարանին, որը բաղկացած էր ժողովրդավարական սկզբունքներով ընտրվող 33 պատգամավորներից:

Նախագահական բոլոր ընտրությունները եղել են մրցակցային, որի արդյունքում ներկայումս պաշտոնավարում է Արցախի Հանրապետության արդեն թվով 4-րդ Նախագահը:

2017թ. փետրվարի 20-ին Արցախը հանրաքվեով ընդունեց նոր Սահմանադրություն, որով կիսանախագահական կառավարման համակարգը փոխարինվել է մաքուր նախագահականով: Հանրապետության Նախագահը հետագայում էլ է ընտրվելու ժողովրդի կողմից: Նա և՛ պետության գլուխն է, և՛ կառավարության ղեկավարը, այսինքն՝ մարմնավորում է գործադիր իշխանությունը: Արցախի Ազգային ժողովը ունի ուժեղ հակակշռող իրավունքներ: Նախագահի նկատմամբ այն ոչ միայն ունի սովորական պառլամենտական վերահսկողության իրավունքները, այլ նաև կարող է իր անդամների 2/3-րդով քաղաքական պատճառներով անվստահություն հայտնելու իրավունք: Դատական իշխանությունը ուժեղացված է ի հաշիվ նրա, որ դատավորներն այլևս չեն նշանակվում Հանրապետության Նախագահի կողմից, այլ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ խորհրդարանի կողմից:

Արցախի նոր Սահմանադրությունը ամրագրում է հիմնական իրավունքների ժամանակակից լայն ցանկ և դրանց ապահովման գործում երաշխիքներ:

Հարկ է արձանագրել, որ Freedom House կազմակերպությունը, Ադրբեյջանին մշտապես բնութագրել է որպես «անազատ» պետություն, տեղավորելով նրան իր 1-ից

մինչև 6-ը կետեր ունեցող սանդղակի ամենացածր աստիճանին (6)¹⁰, մինչ Արցախն արդեն տարիներ շարունակ գնահատվում է որպես «կիսագատ» (4-րդ աստիճան):

բ) Լեռնային Ղարաբաղի ներգրավվածությունը միջազգային հարաբերություններում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը իր գոյության գրեթե սկզբից ներգրավված է միջազգային հարաբերություններում: 1990-ական թվականներից ի վեր «ղարաբաղյան հարցը» գրեթե կանոնավոր կերպով գտնվում է «գազաթնաժողովների» օրակարգում և հանդիսանում նաև այլ միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, Եվրախորհուրդ, ԵՄ ևն) քննարկումների առարկա:

Լեռնային Ղարաբաղը 1992-ից սկսած որպես հակամարտության կողմ Հայաստանի ու Ադրբեջանի կողքին անմիջականորեն մասնակցում է «Մինսկի խմբի» աշխատանքներին: Ընդ որում, Լեռնային Ղարաբաղի իշխանությունները բավականին հաճախ ներկայացնում էին միանգամայն ինքնուրույն դիրքորոշումներ, որոնք տարբերվում էին Հայաստանի Հանրապետության դիրքորոշումից: 1993 թ. կնքված բոլոր հրադադարների կողմեր են հանդիսացել միայն Լեռնային Ղարաբաղը և Ադրբեջանը: 1992-1997 թթ. Լեռնային Ղարաբաղը մասնակցել է Արցախյան հիմնախնդրին վերաբերող բոլոր բանակցություններին՝ որպես հակամարտության կողմ: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի բոլոր չորս բանաձևերը, որոնք ընդունել է 1993թ. ապրիլից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում¹¹, հաշվի են առել այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ է:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1993 թ. ընդունած իր առաջին իսկ 822 բանաձևում ուղղակիորեն ընդգծել է, որ Քելբաջարի շրջանը գրավվել է «տեղական հայկական ուժերի» կողմից: Չնայած հետագա բանաձևերում նման ձևակերպում այլևս չի կիրառվել, սակայն միաժամանակ երբևէ Անվտանգության խորհուրդը չի արձանագրել, որ Ադրբեջանի որևէ տարածք գրավվել է Հայաստանի Հանրապետության կողմից: Ընդհակառակը, 1993թ. հուլիսի 27-ի թիվ 853 բանաձևի

¹⁰ 106 Ռաթինգերը օգտագործում է հետևյալ պարամետրերը՝ 1. Electoral Process: executive and legislative elections, and electoral framework; 2. Political Pluralism and Participation: party system, competition, and minority voting rights; 3. Functioning of Government: corruption, transparency, and ability of elected officials to govern in practice; 4. Freedom of Expression and Belief: media, religious freedom, academic freedom, and free private discussion; 5. Associational and Organizational Rights: free assembly, civic groups, and labor unions; 6. Rule of Law: independent judges and prosecutors, due process, crime and disorder, and legale quality; 7. Personal Autonomy and Individual Rights: freedom of movement, property rights, women's and family rights, and freedom from economic exploitation.

¹¹ Բանաձև Nr.822՝ 30.4., Nr.853՝ 9.7., Nr.874՝ 14.10. ու Nr.884՝ 12.11.1994:

9-րդ կետով «Անվտանգության խորհուրդը ... հորդորում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը շարունակել գործադրելու իր ազդեցությունը, որպեսզի Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղ մարզի հայերը ընդունեն Խորհրդի թիվ 822 (1993) բանաձևն ու ներկայիս բանաձևը և որ այդ կողմն ընդունի ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի առաջարկները...»: Այն, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կարծիքով Ադրբեջանի հետ ռազմական գործողությունները վարում էին Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը, աներկբայորեն երևում է նաև թիվ 884 (1993) բանաձևից, որով Անվտանգության խորհուրդը «2. կոչ է անում Հայաստանի կառավարությանը օգտագործել իր ազդեցությունը, որպեսզի Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղ մարզի հայերը ընդունեն Խորհրդի թիվ 822 (1993) 853 (1993) ու 874 (1993) բանաձևերն, ու ապահովել, որ ներգրավված ուժերին չտրամադրվեն իրենց ռազմական գործողությունները ընդլայնելու միջոցներ...»:

III.1994-1995 թթ. Զինադադարի համաձայնագրերը

Ներկա իրավիճակում, միջազգային իրավունքի տեսանկյունից միակ վերաբերելի և կողմերին միջազգային իրավունքով կաշկանդող իրավական փաստաթղթերն են 1994-1995 թթ. Զինադադարի պայմանագրերը, որոնք առ այսօր վավերական են: Հարկ է նկատել, որ դրանց կնքման արդյունքում 1993 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված բոլոր չորս բանաձևերը դարձել են առարկայագուրկ և չունեն որևէ իրավաբանական նշանակություն:

Ադրբեջանը ի սկզբանե չի կատարել բոլոր 4 բանաձևերի ամենահիմնական պահանջը՝ կրակի դադարեցում, ռազմական և թշնամական գործողությունների դադարեցում՝ ապավինելով հակամարտության ռազմական ճանապարհով լուծմանը: Հենց Ադրբեջանի կողմից բանաձևերի հիմնարար պահանջները չկատարելու հետևանքով էր, որ անհնարին է դարձել բանաձևերի ամբողջական իրականացումը՝ գորքերի դուրս բերումը, թեև Արցախի կողմից բանաձևերի կատարման ուղղված որոշակի քայլեր ձեռնարկվել են: Ադրբեջանը լռում է բանաձևերի մյուս պահանջների մասին՝ կրակի դադարեցում, տնտեսական, տրանսպորտային, էներգետիկ բլոկադայի վերացում, որոնք վերջինիս կողմից նույնպես չեն կատարվել¹²: Ըստ Ռուսաստանի կողմից Մինսկի խմբի այդ ժամանակվա ներկայացուցիչ Վ. Կազիմիրովի, չկատարման արդյունքում այս բանաձևերը արժեզրկվեցին, Անվտանգության խորհուրդը իր հեղինակությունը պահպանելու համար այլևս չընդունեց որևէ նոր բանաձև: Այդ իսկ

¹² Այս մասին հստակ նշում է Վ. Կազիմիրովը իր հոդվածում <http://www.vn.kazimirov.ru/k100.htm>:

պատճառով, 1994-95 թթ. Զինադադարի պայմանագրերի համար իրենք ստիպված էին «մտածելու նոր հիմք»¹³:

Նշված բանաձևերը սպառել են իրենց 1994-1995 թթ. կնքված Զինադադարի պայմանագրերով: 1994 թ. մայիսի 11-ի զինադադարի առաջին պայմանագիրը նախատեսում էր, որ նույն թվականի մայիսի 12-ից կողմերը պարտավորվում են «ամբողջությամբ դադարեցնել կրակը և ռազմական գործողությունները»: Քանի որ այդ պայմանագրով նախատեսված ժամկետում (մինչև 1992 թ. մայիսի 22) հնարավոր չէրավ կնքել դրանով նախատեսված՝ զինված ընդհարումը դադարեցնելու վերաբերյալ համաձայնագիրը, 1994 թ. հուլիսի 26-ին երեք կողմերը (Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ և Հայաստան) իրենց վրա պարտավորություն վերցրեցին «դադարեցնել կրակը և պահպանել կրակի դադարեցման ռեժիմը՝ **ընդհուպ մինչև քաղաքական մեծ Պայմանագրի կնքումը**, որը նախատեսում է ռազմական գործողությունների ամբողջական դադարեցումը» (ընդգծումը մերն է): Ի զարգացումն այդ համաձայնագրերի, 1995 թ. փետրվարի 4-ին պայմանավորվող երեք հակամարտող կողմերը (Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ և Հայաստան) «խաղաղ գործընթացի առաջխաղացման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով» կնքեցին Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում կրակի դադարեցման ամրապնդման վերաբերյալ: 1994-95 թթ. համաձայնագրերը գործող միջազգային իրավունք են և արգելում են դրանց բոլոր կողմերին ձեռնարկելու որևէ գործողություն դրանց բովանդակության դեմ՝ առավել ևս ռազմական ճանապարհով փորձելու լուծել որևէ խնդիր:

2016 թ. ապրիլին Ադրբեջանի ագրեսիայից հետո Ադրբեջանը փորձ կատարեց հրաժարվել 1994 թ. Զինադադարի համաձայնագրից՝ փորձելով դա ներկայացնել որպես Հայաստանի կողմից չեղարկված: Միաժամանակ փորձ է արվել 2016 թ. ապրիլի 5-ի երկկողմանի զինադադարի (Հայաստան և Ադրբեջան) բանավոր համաձայնությունը ներկայացնել որպես զինադադարի միակ իրավական հիմք: Ի պատասխան դրա, 12 ապրիլի 2016 թ. Ռուսաստանի Դաշնությունը ԵԱՀԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցչությանը ուղղված նոտայում վճռականորեն ընդգծել է, որ 1994-95 թթ. համաձայնագրերը «ունեն անժամկետ բնույթ և նախկինի պես հանդիսանում են զինադադարի (ռուսերեն տեքստում՝ *перемирие*) հիմք»: Այս սկզբունքային դիրքորոշումը ամբողջությամբ համապատասխանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների միասնական դիրքորոշմանը: Հայաստանի Արտաքին գործերի նախարարությունը նույնպես իր 25.04.2016 թ. հայտարարությունում վերահաստատել է նույն մոտեցումը:

¹³ Московский комсомолец, 25.04.2016, N 27089:

Աղբբեջանը միջազգային պարտավորություն ունի բարեխղճորեն պահպանելու 1994-95 թթ. վերը նշված Ձինանդադարի պայմանագրերը, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ՝ Արցախի Հանրապետության հանդեպ: Սրանով վերահաստատվում է նաև այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքի մասնակի սուբյեկտ է՝ *de facto* պետություն:

Արցախի նկատմամբ ուժի կիրառումը հնարավոր է միայն ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի ուժով՝ որպես ինքնապաշտպանության իրավունքի իրացում: Մինչդեռ Աղբբեջանը բազմիցս հայտարարել է, որ եթե բանակցություններում չհասնի իր համար ցանկալի լուծմանը, ապա դրան հասանելու է ռազմական ճանապարհով:

Վերոշարադրյալից ելնելով, որևէ իրավական հիմք չունի Աղբբեջանի այն պնդումը, որը նա պայքարում է իր տարածքային ամբողջականության համար և կիրառել ուժ կամ հանդես գալ ուժի կիրառման սպառնալիքով: